

ԵՐԱԶ

ԱԽԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Ալաղեազի շնոքն էր փուեր,
Զան, շուքի մէջ քուն մրայ.
Փէրին եկաւ, երազն եկաւ,
Ինձի դրկեց, քուն մրայ...—

—«Հովիպն է իմ դիմաց մօրս պէս դրկաբաց, հովիտը զառ
կանանչ, ինձ մանկունց խաս ճանանչ։ Գեղն է մար-մարմանդ գալ-
թում դէպ՝ հեռուն արօպի միջով, արտերի միջով. քարփէն, սուր-
քարփէն առուն սօթ կուրայ... Ու հովի հովն անուշ, հովն անուշ,
հովն անուշ...»

Ե՛, ձիս, չան ձիս եռ կուրայ,
Ուրքը ժէռին զիլ կուրայ,
Ժէռը կէծ ու պէծ կուրայ...

Խշուն անրառը հեռէն, շատ հեռէն խորունկ կը հնայ, մէկ
էլ զօրքի պէս զիլ քան զիլ կը գոռայ. մէկ էլ մնջի պէս կը մարի
ու մէկ էլ ձէն կուրայ, ինձի ձէն կուրայ...

Ե՛ս, սիրոս, վառ սիրոս, չան սիրոս
Զանգի պէս, սիրոյ պէս կը զնդայ...
Ձիս դրկի ու ճակփէն պագ առայ,
Քամու պէս զիլ թռայ, նւր թռայ...

Ե՞, ջան, հովիտը ոպքիս տակն առայ, նշխուն հովիտը վարդերով վառւան. էսպեղ թլրուն է սիրով բաց արել. ձէնն անուշ, ձէնն անուշ...

Կանանչ, կանանչ ուռենի,
Ջահել, սիրուն ուռենի
Ես էլ քեզ պէս կանանչ եմ,
Ջահել, սիրուն ուռենի...

Արակի պէս ու ջրի պէս սիրուն ձիս,
Մարալիս մօտ, եղնիկիս մօտ տմր ինձ, ձիս...

— Ալ ու կանանչ վարդ կոկոն,
Էս սեաչեաչ մարմար ջան,
Ես քեզ կոկոն վարդ գեսայ,
Ջան, մարմար ջան, եղնիկ ջան.
Ասողդ ասողդիս դուր կուգայ,
Դալար կեանքս քեզ մարադ,
Ջան, մարմար ջան, եղնիկ ջան...

Ե՞ս, սիրոս, իմ սիրոս, բոց սիրոս,
Աշխարքում, երկնքում իմ սիրոս.
Ահանքի պէս, գարնան պէս կը զնգայ,
Եղնիկ ջան, մարմար ջան, ծով սիրոս...

1899. Գուլիս

Լեռն-Արագած:

առաջ մաս ըսով ամբ առաջ է չի
... քարմար ով սմբ ըսով ամբ մասաւ
... առաջ բայ սնայսան ով մար սմբ
... քարմար ով մար մաս սմբ ամբ